

Քննարկում՝ Վայոց ձորի մարզպետարանում

25.10.2012



ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի նիստերի դահլիճում կայացավ աշխատանքային խորհրդակցություն, որը վարում էր մարզպետ Էդգար Ղազարյանը:

Խորհրդակցությունը նվիրված էր ա/թ հոկտեմբերի 6-ին Վայոց ձորի մարզի Արենի գյուղում կայացած գինու ավանդական փառատոնի և մարզային բերքի տոնի արդյունքների և 2013 թվականին նշված միջոցառումներն իրականացնելու կազմակերպչական հարցերի և ծրագրերի քննարկմանը:

Խորհրդակցությանը մասնակցում էին <Հայաստանի համայնքների հանրապետական ասոցացիայի> նախագահ Էմին Երիցյանը, <<Արենի>> Փառատոն>> Հիմնադրամի տնօրեն Նունե Մանուկյանը, մարզպետարանի պատասխանատու պաշտոնյաներ, մարզի խաղող արտադրող համայնքների ղեկավարներ, ՀԿ և տուրիստական կազմակերպությունների ղեկավարներ:

Քննարկման ընթացքում խոսվեց միջոցառման տեղի, կազմակերպման ժամանակացույցի, փառատոնի մշակութային և պաշտոնական բաղադրիչների մասին: Որպես փառատոնի հանդիսավոր բացման և փակման արարողությունների ամենահարմար վայր համարվեց Եղեգնաձորի քաղաքային ամֆիթատրոնը: Նշվեց, որ փառատոնի հոգաբարձուների խորհրդում պիտի ընդգրկվեն Եղեգնաձորի տարածաշրջանի այն համայնքների ղեկավարները, որոնք մաս են կազմելու փառատոնի: